

ՀՀ Կրթութիւն, Գիտութիւն, Մշակութեան եւ
Սպորտի նախարարութիւն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱԿՈՒԲ ՀԱԿՈՒԲՅԱՆ

Մատենագիտութիւն

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ
1923-2013

Մատենագիտություն. 1945-2024



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NATIONAL
LIBRARY
OF ARMENIA

Երևան
«Գիրք» հրատարակչություն

2024

ՀՏԴ 016:75(01)
ԳՄԴ 91.9:85g1
Հ 177

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱԿՈՒ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԾՆՆՂՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ

Հակոբ Հակոբյան 1923-2013: Մատենագիտություն.
1945-2024 / Կազմ.՝ Ա. Ադամյան; Խմբ.՝ Ե. Տեր-Խա-
չատրյան.- Եր.: «Գիրք» հրատ., 2024.- 288 էջ:

ՀՏԴ 016:75(01)
ԳՄԴ 91.9:85g1

ISBN 978-9939-801-29-2

© «Գիրք» հրատարակչություն
(Հայաստանի ազգային գրադարան)
2024

ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՑԱՆ (Դիմանկարի փոխարեն)

Նկարիչ Հակոբ Հակոբյանը արդի հայ կերպարվեստի խոշորագույն երևույթներից մեկն է, իր ոճը ստեղծած, գեղանկարչական իր ուրույն մտածողությունը հաստատած արվեստագետ, միանգամայն ինքնատիպ անհատականություն: Հակոբ Հակոբյանը թողել է գեղարվեստական հարուստ ժառանգություն՝ հարյուրավոր կտավներ, մեծաթիվ ջրաներկ աշխատանքներ, բազմաթիվ գծանկարներ, գրաֆիկական թերթեր, գրքային նկարազարդումներ, ինչպես նաև ինքնօրինակ քանդակներ: Վավերական իրողություն է, որ իր նկարչությունը արդի հայ արվեստի բարձրակետերից մեկն է:

Իր գեղարվեստական ստեղծագործությանը զուգահեռ Հակոբ Հակոբյանը գրել է բազմաթիվ հոդվածներ, էսսեներ և տարաբնույթ այլ նյութեր, ունեցել է բազմաթիվ հարցազրույցներ, որոնք տպագրվել են ժամանակի հայաստանյան և սփյուռքահայ մամուլի էջերում և զանազան ալբոմներում, կատալոգներում և բուկլետներում: Տասնյակ տարիների ընթացքում նկարչի արվեստի շուրջ գրվել են հարյուրավոր հոդվածներ և այլ գրություններ հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով:

Այսպես առաջացել է մեծատաղանդ և համբավավոր արվեստագետի գրական գործերի և իր արվեստի շուրջ ստեղծված մեծածավալ գրավոր նյութի մատենագիտությունը կազմելու անհրաժեշտությունը:

Հակոբ Հակոբյանը ծնվել է 1923 թվականի մայիսի 16-ին, անձնաթղթով՝ մայիսի 24-ին, Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղա-

քում: Ծնողները Մեծ Եղեռնից հրաշքով փրկված մարդիկ էին, և ընտանիքը, հայ բազմաթիվ այլ ընտանիքների պես, ապրում էր դժվարին պայմաններում: Հայրը՝ այնթապցի Տիգրան Հակոբյանը, որ զբաղվել է լուսանկարչությամբ, այնուամենայնիվ կարողացել է արժանապատվորեն հոգալ ընտանիքի կարիքները: Տիգրան և Զարուհի Հակոբյանները ունեցել են չորս զավակ՝ երկու մանչ և երկու դուստր: Հայրը, ինչպես արևմտահայերը կասեին, շատ է գուրգուրացել փոքրիկ Հակոբիկի վրա և ուզել է, որ նա ստանա արժանավոր կրթություն: Նա գիտակցել է, որ օտար երկրում, օտար իրականության մեջ միայն բարձր կրթությունը կարող է ապահովել տարագիր հայ մարդու ապագան: Եվ հայրը Հակոբիկին տվել է Ալեքսանդրիայի ամենահարգի անգլիական դպրոցը: Դա եղել է վճարովի և թանկ դպրոց: Այստեղ Հակոբիկը սովորել է միայն երկու տարի: Բանն այն է, որ հայրը վախճանվում է քաղցկեղից, և ընտանիքը հայտնվում է ծանր, այլևս անապահով դրության մեջ: Այրի երիտասարդ կնոջ համար շատ դժվար է դառնում զավակների հոգսը տանելը, և մայրը, ստիպված, Հակոբիկին տալիս է գիշերօթիկ դպրոց: Այսպես պատանի Հակոբը 1934 թվականին դառնում է Կիպրոսի Մելգոնյան վարժարանի սան: Մելգոնյանում Հակոբը սովորում է մինչև 1941 թվականը: Այդ տարիներին Մելգոնյան վարժարանում հրաշալի ուսուցիչներ էին դասավանդում, գրականության և մշակույթի շատ անվանի մարդիկ: Վարժարանում գրի, մշակույթի, հոգևոր կյանքի հրաշալի մթնոլորտ կար: Հակոբիկը շրջապատված է եղել արժանավոր և շնորհալի դասընկերներով՝ ապագա հայտնի գրողներ Գրիգոր Քեշիշյան, Կարպիս Սուրենյան, ուրիշներ... Եվ այնուամենայնիվ պատանի Հակոբիկը չի համակերպվում վարժարանի կյանքին, նրան ահ և սարսափ է պատճառում վարժարանի կյանքը: Շուրջբոլորը միակերպ խուզված գլուխներով, միատեսակ գորշ հագուստ հագած մանուկներ և

պատանիներ: Այստեղ հավաքվել են, Անդրանիկ Ծառուկյանի դիպուկ խոսքով ասած, «մանկություն չունեցող մարդիկ»: Ընտանեկան ջերմ միջավայրին, մայրական խոհանոցի կերակուրներին սովոր պատանին իրեն զգում է, ինչպես ինքն էր պատմում, համակենտրոնացման ճամբարում: Այս չհամակերպվելը, այս ըմբոստությունը, այս ներքին դրաման նրա մեջ ծնում են բարձր մտածումներ և ձգտումներ, կյանքի մասին ա՛յլ պատկերացումներ ունեցող ապագա արվեստագետին:

Հոր լուսանկարչական գործը մանուկ Հակոբիկին մղել է դեպի նկարը, պատկերը: Հակոբը նկարել սիրել է մանուկ հասակից: Մելգոնյան վարժարանում նույնպես Հակոբը շարունակում է նկարել: Վարժարանի՝ իր համար խորթ մթնոլորտում նկարելը դառնում է պատանի Հակոբի մխիթարությունն ու փրկությունը:

Պահպանվել է Մելգոնյան վարժարանի սան պատանի Հակոբի մի շատ խոսուն և արտահայտիչ լուսանկարը: Լուսանկարից մեզ է նայում նիհարակազմ մի պատանի, տասներկուամյա մի տղեկ: Տղան շատ տխուր աչքեր ունի և մի տրտում հայացք, որ ինքնին շատ բան է ասում անցանկալի միջավայրում հայտնված պատանու հոգեկան վիճակի մասին: Բայց լուսանկարը էլի մի կարևոր բան է ասում: Վարժարանի սանը ձախ ձեռքով բռնել է ներկապնակը, աջ ձեռքով՝ վրձինը, և բռնել է պրոֆեսիոնալ, հասուն ու կազմակերպված նկարչի պես: Պատանու մատները բռնել են վրձինը այնպես, ինչպես պրոֆեսիոնալ ջութակահարը բռնում է կնտնոցը: Տղան իր ամբողջ տեսքով ասում է, որ ինքը այլևս ընտրել է իր ճակատագիրը՝ ինքը նկարիչ է լինելու:

1941 թվականին Հակոբ Հակոբյանը վերադառնում է Ալեքսանդրիա: Այստեղ նա երկու տարի, մինչև 1943 թվականը աշխատում է տեքստիլ ֆաբրիկայում:

1943 թվականին Հակոբ Հակոբյանը տեղափոխվում է Կահիրե, աշխատում է իբրև դիզայներ-ձևավորող: Միաժամանակ սովորում է Կահիրեի Գեղարվեստների բարձրագույն ակադեմիայում: Մի խոչընդոտ է առաջանում. ակադեմիայում կրթությունը արաբերեն էր, Հակոբ Հակոբյանը արաբերեն չգիտեր: Եվ նա իր առջև խնդիր է դնում, ներքին կարգապահական կարգ է սահմանում՝ ամեն օր արաբերեն առնվազն երեք բառ սովորել, և շուտով հասնում է իր նպատակին՝ տիրապետում է լեզվին, ինչը հնարավոր է դարձնում շարունակելու ուսումը: 1945 թվականին Հակոբ Հակոբյանը մասնակցում է Եգիպտոսի հայ նկարիչների առաջին ցուցահանդեսին:

Այս տարիներին Հակոբ Հակոբյանը գլխավին նվիրվում է նկարչությանը: Ցավոք սրտի, 1944–1952 թվականների իր նկարչության մասին մենք շատ բան չգիտենք. այդ տարիների նկարներից շատ քիչ բան է պահպանվել, թերևս միայն «Աղոթողներ» ընդհանուր խորագրով ջրաներկ աշխատանքների մի ոչ մեծ շարքը: Բանն այն է, որ իր նկարչությունից դժգոհ նկարիչը ոչնչացրել է իր նկարների մեծ մասը: Եվ այնուամենայնիվ երիտասարդ նկարչի մասին համակրանքի և դրվատանքի խոսքեր են ասում և գրում ինչպես եգիպտացի նկարիչներն ու մշակույթի մարդիկ, այնպես էլ իր ազգակիցները՝ եգիպտահայ նկարիչները: Առանձնապես ջերմ համակրանքով է վերաբերվում իր երբեմնի սանին տաղանդավոր նկարիչ և բարձրաճաշակ արվեստագետ Օննիկ Ավետիսյանը:

Համայնքը, որ ակնհայտորեն հույսեր է կապում երիտասարդ արվեստագետի հետ, որոշում է Հակոբ Հակոբյանին հովանավորել և ուղարկել Փարիզ՝ սովորելու և կատարելագործվելու իր արվեստի մեջ: 1952 թվականին Հակոբ Հակոբյանը արդեն Փարիզում է և սովորում է նախ Անդրե Լոտի (Andre Lhote, 1885–1962) արվեստանոցում, ապա մտնում է Գրան-Շոմիեր ակադեմիան,

ուր ուսանում է Էդուարդ Գոյերգի (Edouard Goerg, 1893–1959) մոտ: Անդրե Լոտը նշանավոր նկարիչ էր, քանդակագործ, մանկավարժ: 1950–ական թվականներին նա ՅՈՒՆԵՍԿՕ–ին կից Նկարիչների և քանդակագործների միջազգային հանձնաժողովի նախագահն էր, տեսական հայտնի աշխատությունների հեղինակ՝ «Տրակտատ բնանկարի մասին» (1939), «Տրակտատ ֆիգուրի մասին» (1950): Էդուարդ Գոյերգը նշանավոր նկարիչ էր (նկարում էր մեծ մասամբ գուաշով), ջրաներկի վարպետ էր, գծանկարի և նկարագարողությունների վարպետ:

Փարիզում Հակոբ Հակոբյանը մնում է մինչև 1954 թվականը, ծանոթանում և բարեկամանում է Գառգուին, Ժանսեմին, իր ժամանակի ֆրանսիացի նշանավոր նկարիչների: Փարիզում սովորելու ընթացքում, 1953 թվականին «Էմիլ» ծածկանունով մասնակցում է Բուխարեստում կայացած երիտասարդության և ուսանողության համաշխարհային չորրորդ ֆեստիվալին: Իր «Ֆելլաիի ընտանիքը» կտավով շահում է երկրորդ մրցանակը և նվիրում է այն սովետական պատվիրակությանը: Հաջորդ տարում մասնակցում է Ֆրանսիայի երիտասարդ նկարիչների ցուցահանդեսին: Նրան լավ է ընդունում նկարչական միջավայրը, երիտասարդ նկարիչն ինքն էլ ներդաշնակ է ժամանակի հետ, և ամեն ինչ ընթանում է ցանկալի հունով: Թվում է՝ հասնում է նշանակալի հաջողության ժամանակը, և արվեստների մայրաքաղաքը ուր որ է կբացի հաջողության դռները երիտասարդ նկարչի առջև: Բայց առաջին հաջաքից անսպասելի և նույնիսկ անհասկանալի բան է տեղի ունենում. Հակոբ Հակոբյանը թողնում է Փարիզը և վերադառնում է Կահիրե: Այստեղ նա լիովին տրվում է իր նկարչությանը և շատ հաճախ մասնակցում է եգիպտոսցի և եգիպտահայ նկարիչների կազմակերպած ցուցահանդեսներին: Փարիզը թողնելը ուներ իր ներքին խոր դրդապատճառը: Իր երիտասարդության

առաջին տարիներից նկարիչը փայփայել է մի նվիրական երազանք՝ հասնել Հայաստան և հաստատվել Հայաստանում: Փարիզը իր նկարչական կյանքի հարստությամբ և բազմազանությամբ, արվեստի ու մշակույթի կանչող և թովիչ բոլոր գայթակղություններով չի գրավում երիտասարդ նկարչին: Եվ հետո նկարիչը գիտեր, որ Փարիզում հաստատվելու դեպքում հետո գրեթե անհնար էր լինելու դուրս պրծնել Փարիզի քաղցր և քնքուշ ճիրաններից: Եվ նա հաստատականորեն վերադառնում է Կահիրե:

1954–1961 թվականներին Հակոբ Հակոբյանը իր ստեղծագործական վերելքի ճանապարհին է: Նա ստեղծում է նատյուրմորտների և հորինվածքային նկարների հոյակապ շարքեր, յուզաներկ և ջրաներկ շատ հետաքրքրական աշխատանքներ: Այդ աշխատանքներում արդեն հստակորեն ուրվագծվում են Հակոբ Հակոբյանի գեղարվեստական մտածողության սահմաններն ու յուրահատկությունները, հստակվում և կայունանում է նկարչի անհատական ոճը:

Հակոբ Հակոբյանի այդ տարիների նատյուրմորտները ներկայացնում են մի ուրույն և ամբողջական աշխարհ: Դրանցից ամեն մեկը ուղղակի գլուխգործոց է՝ «Կիթառով նատյուրմորտ» (1954), «Պատուհան» (1957), «Սխտոր պատշգամբում» (1957), «Պատըշգամբ» (1958), «Պատուհան» (1958), «Ավելով նատյուրմորտ» (1959), «Անկյուն խոհանոցում / Խոհանոցի մի անկյուն» (1960), «Նատյուրմորտ սխտորով» (1966), «Պիջակով նատյուրմորտ» (1960), «Նատյուրմորտ» (1961), «Կախված սխտորներ» (1961), «Կախիչից կախ» (1961)...

Իր նատյուրմորտներում նկարիչը պատկերում է սովորական, առտնին իրեր, կենցաղային, խոհանոցային առարկաներ, ամեննին էլ ոչ բանաստեղծական բանջարեղեն՝ սոխ ու սխտոր, և այդ բոլորին տալիս է որոշակի իմաստ ու բովանդակություն:

Ընդգծելով ամեն մի իրի և առարկայի ձևը, նկարիչը ձգտում է հասնել առարկայի բուն ինքնությանը: Ամեն մի իր և առարկա կրում է ժամանակի դրոշմը և, հետևաբար, կյանքի մասին կարող է ասել շատ ավելի բան, քան մենք գիտենք: Այդ նատյուրմորտները պատկերված են, թվում է, փակ, անձուկ տարածության մեջ, բայց, միևնույն է, նրանք խորհրդանշում են մարդկային ողջ կյանքը:

Փարիզից վերադառնալուց հետո Հակոբ Հակոբյանը ստեղծում է յուղաներկ և ջրաներկ մի շարք նշանակալից գործեր՝ մարդկային ֆիգուրներով: Մի քանիսը կենցաղային վիճակ և տեսարան են ներկայացնում, ինչպես օրինակ՝ «Լվացարարուհին» (1958), «Կինը խոհանոցում» (1959)...

Առավել նշանակալից է գործերի մյուս շարքը՝ «Ձկնորս» (1952), «Սպասավորը» (1959), «Կիթառով պատանին» (1959), «Մտորում» (1960), «Հանգիստ» (1960), «Վիշտ» (1961)...

Եթե առաջին շարքի գործերում պատկերված թեմայի հանդեպ նկարչի վերաբերմունքի մեջ զգացվում է ֆրանսիական միգերարվեստների նկարչության արձագանքը, ապա երկրորդ շարքի գործերում նկարիչը լիովին հեռացել է միգերարվեստներից: Այս շարքի գործերի բնորոշ երիտասարդ մի մարդ է, որի կերպարի մեջ ընդգծված է միայնակ անհատի ներքին դրաման: Արտաքուստ հանգիստ, խաղաղ ու անխռով հայացքի և կեցվածքի տակ մեծ լարում է զգացվում, կյանքի բարդությունների ու դժվարությունների դիմաց կանգնած անօգնական և անպաշտպան անհատի ներքին տագնապն ու դրաման: Ինքնակենսագրական տարրը այս կտավներում տանում է դեպի մեծ ընդհանրացում: 1961 թվականին նկարված «Վիշտ» կտավը պարզորեն բացահայտում և ամբողջացնում է այդ դրաման:

Բայց ինչպես ասում են, խորքին մեջ դա սուկ մեկ անհատի կյանքը չէ, դա տարագրության մեջ ապրող հայության մի մեծ հատվածի, մեկ ամբողջ համայնքի դրաման է:

Հակոբ Հակոբյանը էն գլխից անթաքույց համակրանք է ունեցել Սովետական Միության հանդեպ, իսկ Սովետական Հայաստանի հանդեպ ունեցել է հայրենիք որոնող, դեպի հայրենիք ձգտող հայ մարդու սեր և խանդաղատանք:

1958–1959 թվականներին Կահիրեի և Ալեքսանդրիայի թանգարաններն ու պատկերասրահները ձեռք են բերում Հակոբ Հակոբյանի կտավները: Եվ չնայած այդ ակնհայտ հաջողությանը, նրա հայացքը մնում է ուղղված Հայաստանին: 1958 թվականին նրա մեկ կտավը ցուցադրվում է Մոսկվայում և Լենինգրադում «Միացյալ Արաբական Հանրապետության արվեստը» ցուցահանդեսում: 1959–ին հաջողությամբ մասնակցում է Ալեքսանդրիայի երկրորդ բիենալեին: 1960–61 թթ. նկարիչը իր տասը կտավը նվեր է ուղարկում Հայաստանի պետական պատկերասրահին: Այդ նկարները ցուցադրվում են պատկերասրահում և շատ ջերմ ընդունելություն են ունենում:

Վրա է հասնում վերջին վճռական քայլի ժամանակը: 1962 թվականի աշնանը Հակոբ Հակոբյանը ընտանիքով ներգաղթում է Հայաստան և հաստատվում Լենինականում:

1960–ական թվականները մեր ազգային գիտակցության զարթոնքի և ազգային վերելքի տարիներն էին: Զարթոնք էր ապրում նաև հայ գեղանկարչությունը: Ասպարեզ էր մտել երիտասարդ գեղանկարիչների մի սերունդ, որ նոր աստիճանի էր բարձրացնելու հայ կերպարվեստը: Տաղանդավոր այդ արվեստագետները կարողացան ստեղծել իրենց սեփական ոճը և հաստատել իրենց անհատականությունը: Մինաս Ավետիսյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Հովհաննես Մինասյանը, Վրույր Գալստյանը, Մար-

տին Պետրոսյանը, Մեյրան Խաթլամաջյանը, Լավինիա Բաժբենուկ-Մելիքյանը և ուրիշներ նոր փառք բերեցին հայ գեղանկարչությանը: Հանդուգն, համարձակ, ըմբոստ, անհաշտ և մանավանդ տաղանդավոր արվեստագետների այդ խումբը սիրով ընդունեց Հակոբ Հակոբյանին և իր նկարչությունը:

Հակոբ Հակոբյանը թեև Լենինականում էր բնակվում, ուր աշխատում էր տեքստիլի գործարանում իբրև ձևավորող-դիզայներ, այնուամենայնիվ լիովին մասնակից էր երևանյան գեղանկարչական կյանքի աշխույժ և արդյունավոր անցուդարձին: Ավելին, ներգաղթից ընդամենը մեկ տարի անց, 1963 թվականին Երևանում բացվում է Հակոբ Հակոբյանի անհատական ցուցահանդեսը, որ նրան համընդհանուր ճանաչում է բերում: Կարճ ժամանակ անց, 1967 թվականին արժանանում է հանրապետական ցուցահանդեսի առաջին մրցանակին: 1963-ից ի վեր Հակոբ Հակոբյանը մասնակից է հանրապետական և միութենական բոլոր կարևոր ցուցահանդեսների: Իր անհատական և խմբակային ցուցահանդեսների թիվը տասնյակ ու տասնյակներով է հաշվվում: Կարևորը այն էր, որ Հայաստանում նկարիչը իր մեծ վերելքի ճանապարհին էր:

Հակոբ Հակոբյանը մեկն էր եզակի այն հայրենադարձներից, որ իրեն զգում և համարում էր Հայաստանում ծնված և մեծացած: Եվ այնուամենայնիվ նկարիչը կարիք է զգում Հայաստանը ճանաչելու մանրամասնորեն: Իր նկարչության մեջ սկսվում է բոլորովին նոր շրջան: 1963 թվականին Հակոբ Հակոբյանը նկարում է իր լավագույն կտավներից մեկը՝ «Մարդը և բույսը»: Բոլորովին մերկ մարդը, մերկ, ինչպես Ռոդենի «Մտածողը», ոտաբոբիկ, ինչպես ոտաբոբիկ են Եզիպտոսում իր նկարած ֆիգուրների մեծ մասը, խոնարհված հողին, ավերի մեջ գուրգուրանքով բույսի մի ծիլ է պահպանում: Կրակի լեզվակ հիշեցնող բույսը կյանքի խորհրդա-

նիշն է, մարդը իմաստավորում է իր կյանքն ու գործունեությունը Երկիր մոլորակի վրա: Նկարչական մտածողությամբ, նկարելակերպով «Մարդը և բույսը» թվում է եգիպտական շրջանի իր վերջին կտավը, այն, թվում է, ամփոփում է եգիպտական շարքը, իր միայնակ անհատը այլևս հողի վրա է, հող ունի, մերկ է, ինչպես նախնական մարդը, և պետք է պահպանի կյանքը այդ հողի վրա, պետք է գուրգուրանքով պահի կյանքի ծիլը և դողա այդ կյանքի վրա:

«Մարդը և բույսը» կտավը միևնույն ժամանակ սկիզբ էր ստեղծագործական նոր շրջանի: Նկարիչը որոշում է ի մոտո ճանաչել երկիրը, բնությունը, բնաշխարհն ու գյուղաշխարհը: Եվ Հակոբ Հակոբյանը սկսում է իր մեծ պտույտը Հայաստանում և մեկնում է Վայոց Ձոր: Սկսվում է Հակոբ Հակոբյանի հոյակապ բնանկարների ժամանակը: Իր բնանկարները հայ արդի գեղանկարչության մեծ նվաճումն են, մեր կերպարավեստի փառահեղ բարձունքը:

Հակոբ Հակոբյանի բնանկարային նկարչությունը կարելի է բաժանել երեք շրջանի: Առաջին շրջանը, ըստ իս, 1963–1971 թվականներն են: Այդ տարիներին են ստեղծվել բնապատկերների լենինականյան հոյակապ շարքը՝ «Դարպաս: Լենինական» (1963), «Փողոց. Լենինական» (1965), «Փողոց Լենինականում» (1965) և էլի մի քանի բնապատկեր, և ապա եղեգնաձորյան հայտնի բնանկարները: «Աղավնաձոր» (1966), «Կեսօր Աղավնաձորում» (1966), «Աղավնաձոր. Աստիճանը պատի մոտ» (1966), «Աղավնաձորյան բնապատկեր» (1967), «Աղավնաձոր» (1968), «Էլեկտրականությունը Մալիշկա գյուղում» (1969), «Մալիշկա գյուղը» (1970) և մյուս բնապատկերները դարձան մեծագույն երևույթ և մեծապես ազդեցին հայ բնապատկերային նկարչության վրա: Ռեժիմի պաշտո-

նական նկարչության տիտղոսավոր նկարիչներն անգամ «հավասար» ընդունեցին ըստ Հակոբյանի:

Հակոբ Հակոբյանի այս բնապատկերները խիստ հազեցած, խիտ ու հարուստ առարկայական աշխարհ են ներկայացնում: Դրանք լավ մտածված, ճարտարակազմական առումով ամուր կառուցված գեղանկարչական հորինվածքներ են: Մի քանի պլաններով ծավալներ՝ խոտի ու աթարի դեզեր, զանազան կառուցվածքներ և շինություններ, ամենահետին պլանում՝ հայկական լեռներ, գունային թանձր, հազեցած մակերեսներ, գունային հետաքրքրական հարաբերություններ,– սրանք այդ բնանկարների բնորոշ յուրահատկություններն են: Հակոբ Հակոբյանի բնանկարային այս առաջին շրջանի աշխատանքներից մեկը «Հայկական մոտիվ» (1968) կտավն է: Այս նույն թեմայով նկարիչը ունի ևս մեկ կտավ, որ կոչվում է «Հայկական բնանկար»: Երկուսն էլ գտնվում են Հայաստանի ազգային պատկերասրահում: Իմ խոսքը առաջինի մասին է: Այդ կտավը ընդհանրացնում է Հակոբ Հակոբյանի առաջին շրջանի բնապատկերների լավագույն կողմերը: Այս կտավում նկարիչը տարածության պատկերման յուրահատուկ սկզբունք ունի, որ իր բարձրագույն իրագործումն է ստանում Հակոբ Հակոբյանի 1970–ական թվականների բնանկարներում:

Հակոբ Հակոբյանի բնապատկերային նկարչության երկրորդ շրջանի գործերը զգալապես տարբերվում են նախորդներից: Նկարչի այս բնանկարներում առարկայական իրակությունները հետզհետե պակասում են՝ հասնելով նվազագույնի: Բնանկարը դադարում է որևէ տեղանքի աշխարհագրական ճշգրիտ պատկերը լինելուց և դառնում է առավել ընդհանրական և խորհրդանշական: Հակոբ Հակոբյանի այս բնանկարներին բնորոշ են մեղմասացությունն ու նրբասացությունը, որոնք առանձնակի բանաստեղծականություն են տալիս պատկերվածին: Նկարչի բնանկարնե-

րում բանաստեղծական քնարականությունը և զգայուն խոհակա-
նությունը զարմանալի բնականոն միասնությանն մեջ են և Հակոբ
Հակոբյանի բնապատկերներին տալիս են բարձրարվեստ երա-
ժշտական երկի հմայք և թովչություն:

Այդ բնանկարներում շարժում և գործողություն չկա, ոչինչ չի
կատարվում: Փոխարենը կա անսահման տարածություն և մի խա-
ղաղություն, որ հոգեկան անդորր է փոխանցում դիտողին: Այդ
բնանկարները դիտողին տալիս են իրենց ամենամեծ և ամենախոր
բովանդակությունը՝ ազատության զգացողություն: Այդ կտավնե-
րում մարդը բացակայում է, բայց կա մարդու ներաշխարհի հա-
րըստությունն ու գեղեցկությունը: Վերջապես ճշմարիտ է նաև այն
հանգամանքը, որ Հակոբ Հակոբյանի կտավներում մարդը կա,
ներկա է, միայն թե նա գտնվում է կտավի առջև, կտավի այս կող-
մում: «Ծիրանի այգին» (1970), «Էջմիածնի ճանապարհին: Աշուն»
(1970), «Գյուղի ծայրին» (1970), «Հին այգի» (1971), «Զրանցքի
ափին» (1971), «Հոկտեմբերյանի ճանապարհին» (1972) և տասնյակ
ու տասնյակ այլ ընտիր բնանկարներ ասվածի լավագույն վկայու-
թյունն են: Այդ բնանկարներում հորիզոնը արձակ է ու անպարա-
զիծ, տարածությունը՝ անվերջ ու անսահման: Ֆրանսիացի մեծ
մտածողը, փիլիսոփան, ֆիզիկոսը գրում է. «Անհուն տարածու-
թյունների հավիտենական լռությունը սարսափեցնում է ինձ»:

Հայ նկարիչը համարձակվել և «անհուն տարածություննե-
րի» լռությունը վերածել է բանաստեղծության, գեղանկարչական
խոսուն պոեզիայի:

«Անդորր» կտավը, որ նկարիչը ստեղծել է 1970 թվականին
իր մեջ մարմնավորում է Հակոբ Հակոբյանի բնանկարային ար-
վեստի լավագույն գծերը:

Հակոբ Հակոբյանի բնանկարն ինքը կարծեք թե մտածում է, թվում է, բնությունն ինքը խոհի մեջ է: Բնությունը մի պահ անշարժացել է մտածումի պահի մեջ:

Հակոբ Հակոբյանի բնանկարը դիտողին ստիպում է մտածել:
Հակոբ Հակոբյանի բնանկարը սովորեցնում է մտածել:

Կյանքի վերջին տարիներին Հակոբ Հակոբյանը վերադառնում է բնանկարչությանը: Միայն թե իր այս բնանկարներում բնությունը տարածություն է, որտեղ անձնավորված զանազան առարկաներ՝ գործիքներ, հունական արձաններ, մանեկեններ, մետաղական ֆիգուրներ այլաբանական կապերի ու հարաբերությունների մեջ են: Այդ տարածության մեջ խորհրդավոր ու խորհրդանշանական գործողություններ են կատարվում: Ասվածի լավագույն վկայությունը գեղանկարների «Սիրո պարտեզ» շարքն է, որ նկարիչը ստեղծել է հիմնականում 2010–2011 թվականներին:

1970–1980–ական թվականները Հակոբ Հակոբյանի ամենաարգասավոր և բեղմնավոր ստեղծագործական աշխատանքի ժամանակն է:

1960–ական թվականների վերջերին նկարիչը վերադառնում է նատյուրմորտի ժանրին: Բայց ինչպես ասված է, «վերադարձը դարձ չէ այլևս, և ոչ էլ կրկնություն հին»: Նկարիչը ստեղծում է տասնյակ ու տասնյակ նատյուրմորտներ, որոնք մեծապես տարբերվում են նատյուրմորտի դասագրքային ըմբռնումից, այն նատյուրմորտներից, որոնք առավել հայտնի են «վանիտաս» անվանումով: Իր նոր նատյուրմորտները միայն սեղանին դրված սովորական կենցաղային իրեր չեն, անշարժ դրված քով քովի: Այս նատյուրմորտները տարածություն են ներկայացնում, կազմակերպված տարածություն, որտեղ զանազան ծավալային առարկաներ, սենյակային իրեր, կահկարասի և այլն, շատ խոսուն ձևով դասա-

վորված են տարածության մեջ: Դրանք փաստորեն նասյուրմորտի և հաստոցային նկարչության միասնություն են ներկայացնում: Ընդ որում, կտավներում զանազան առարկաները՝ արհեստագործական գործիքներ, անսպասելի կենցաղային իրեր և այլն, պատկերված են անսովոր ու զարմանալի շարժումի կամ հարաբերության մեջ: Ասենք, մի աքցանը հարձակվում է մյուս աքցանի վրա («Գործիքներ», 1977), կամ թե թիթեղ կտրելու մկրատը սպառնում է զամբյուղում դրված հավկիթներին («Գործիքներ և հավկիթներ: Հարձակում», 1980): Երբեմն այդ իրերն ու առարկաները «խոսում» են և շատ խոսուն են, ինչպես, օրինակ, սովորական ձեռնոցները («Վարդեր և ձեռնոցներ», 1977, «Ձեռնոցներ սեղանին», 1979): Հակոբ Հակոբյանի նասյուրմորտներում զանազան իրերը, առարկաները, արհեստագործական գործիքները և այլն, պատկերված առարկաների համադրումներն ու զուգակցումները «թարգմանում» են, այլաբանական լեզվով ներկայացնում են մարդկային կյանքի ահերն ու տագնապները, առօրյա կյանքի ներքին դրաման: Ստեղծագործական այս նույն մոտեցումը, նույն սկզբունքը նկարիչը շարունակում է մանեկեններով իր կառուցվածքային հորինվածքներում, որոնք մեծ շարք են ներկայացնում:

Հակոբ Հակոբյանի այս գործերը ընդլայնում էին ժանրի սահմանները և ձեռք էին բերում հասարակական-քաղաքական իմաստ և բովանդակություն: Սա բոլորովին նոր երևույթ էր մեր անդեմ ու աննկարագիր կերպարվեստում:

1978 թվականին նկարիչը ստեղծում է մեծադիր մի նշանակալից կտավ, որ ներկայացնում էր դատարկ հագուստներով, անմարմին մարմինների մի անսահման բազմություն: Դա նոր ժամանակների սպառողական հոգեբանությամբ ապրող բազմությունների, արդի հասարակության դիմանկարն է: Անգլիացի նշանավոր գրող Հերբերթ Ուելսի ստեղծած «անտեսանելի մարդու»՝ Ջոն

Գրիֆֆինի խորհրդանշական կերպարը նոր և անսպասելի մեկնաբանությո՜ւն և գործառույթ էր ստանում: Ուելսի «անտեսանելի մարդը» ձգտում էր անսահման իշխանության, բռնակալական բացարձակ իշխանության, ինչին մտադիր էր հասնել իր անտեսանելի-անմարմին դառնալու կարողության շնորհիվ: Գրիֆֆինի հագուստի մեջ մարմին չկար, և Գրիֆֆինը գործում էր: Քսաներորդ դարում աշխարհի բռնակալական իշխանությունները մարդկության հոծ բազմությունները վերածեցին հագուստներով անմարմին-անդեմ-անկամ, իշխանություններին հլու-հնազանդ, ուղղակի ձեռնասուն զանգվածների: Դա դարի մեծագույն ողբերգությունն էր, մարդու մեջ անհատականության ոչնչացումը և հոտային գիտակցության ստեղծումը: Ջորջ Օրուելլի, Եվգենի Զամյատինի, Օլդոս Հաքսլիի սարսափելի անտիուտոպիաները իրականացան ավելիով, իրականության համեմատ դրանք դարձան աղոտ ու անգույն պատկերներ:

Հակոբ Հակոբյանը պատկերել էր բազմությունների այդ ողբերգական փոխակերպումը: Անմարմին հագուստներով նկարների իր շարքը ամբողջանում է այս սարսռազդեցիկ և շատ խոսուն կտավով: Սակայն սովետական ռեժիմի հավատարիմ մի սպասավորը, որ չգիտես թե ինչ հանգամանքով այդ տարիներին տնօրինում էր հայ կերպարվեստի կյանքն ու առօրյան, և որը լավ հաշվել գիտեր իր շահը, նկարին տվեց «Նեյտրոնային ռումբին՝ ոչ» անվանումը՝ կտավը հավասարեցնելով սովետական քաղաքական պլակատի: Մեկ տարի հետո, 1979 թվականին, նկարիչը նորից է նկարում այդ բազմությունը, շատ ավելի խորախորհուրդ մեծադիր մի կտավ: Այս անգամ անմարմին բազմությունը գտնվում է փակ տարածության մեջ, բանտարկվածի պես ասես հատուկ կափարիչի, ավելի ճիշտ՝ օդահան զանգի տակ: Այս անգամ կտավը կոչվում էր

«Կայարան»: Դատարկ հագուստներ՝ առանց մարմինների, նկարիչը օգտագործում է նաև այլ կտավներում:

1980-ին ստեղծված «Իմ արվեստանոցում» կտավը բացահայտում է արվեստագետի ստեղծագործական սկզբունքներն ու գեղարվեստական մտածողության յուրահատկությունները և կարծեք թե տալիս է իր ողջ ստեղծագործության ամփոփ նկարագիրը:

1980-ական թվականներին նկարիչը մտահղանում է տարբեր գործիքների համադրումով ստեղծել քանդակներ: Ամեն տեսակ իրերն ու գործիքները կրում են մարդկային ձեռքի դրոշմը և, կարելի է ասել, ստեղծված են ըստ կերպարի մարդու: Պարզվում է, որ նրանց ֆիզիկական ձևերի մեջ մարդկային շատ բան կա: Նկարիչը տեսնում է իրերի բնության այդ թաքուն կողմերը, երևան է հանում դրանք, համադրում և գուգակցում է միմյանց հետ՝ ստեղծելով յուրօրինակ և գեղեցիկ հորինվածքներ: Դրանցից մեկը, որ կոչվում է «Ընտանիք», 1989 թվականին տեղադրվել է Արագած լեռան լանջին: Տարիների ընթացքում Հակոբ Հակոբյանը ստեղծել է ավելի քան երեք հարյուր հորինվածք, որոնք նկարիչը անվանում է քանդակներ:

Իր երկարամյա ստեղծագործական կյանքի ընթացքում Հակոբ Հակոբյանը ստեղծել է բազմաբնույթ և բազմապիսի մեծածավալ գեղարվեստական ժառանգություն՝ հարյուրավոր մեծադիր կտավներ, մեծաթիվ ջրաներկ և գրաֆիկական աշխատանքներ, մետաղական հորինվածքներ, նկարազարդել է գրական-գեղարվեստական գործեր... Դրանցից միայն ամենահայտնիների թվարկումը մեծ տեղ ու ծավալ կպահանջեր:

Տասնյակ տարիների ընթացքում Հակոբ Հակոբյանի նկարչության շուրջ ստեղծվել է մեծածավալ գրական-տեսական նյութ հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով, գրվել են հարյուրավոր հոդ-

վածներ և տեսություններ: Եվ այնուամենայնիվ այդ ժառանգությունը այսօր սպասում է իր հանգամանակից ուսումնասիրողներին:

1972 թվականի մայիսի 5-ին կյանքից հեռացավ հայ կերպարվեստի նահապետը՝ Մարտիրոս Սարյանը: Իր հեռացումով փակվեց հայ դասական կերպարվեստի դարաշրջանը: Հակոբ Հակոբյանը գրիչ է վերցնում հրաժեշտի խոսք ասելու մեծ արվեստագետին: Այսպես է սկսում իր «գրական գործը» նկարիչը: Շուրջ քառասուն տարվա ընթացքում Հակոբ Հակոբյանը գրում է բազմաթիվ հոդվածներ, էսսեներ, իր արվեստակիցների գրական դիմանկարներ, ցուցահանդեսների առիթով տեսություններ: Նկարիչը ունեցել է բազմաթիվ հարցազրույցներ: Բանն այն է, որ նկարիչը բանավոր և գրավոր գրագետ, կիրթ խոսք ուներ, իր ասելիքը շարադրում էր շատ սահուն, տրամաբանված և կապակցված: Եվ մշտապես կարևոր ասելիք ուներ: Ուստի և պատահական չէ, որ լրագրողները ձգտում էին Հակոբ Հակոբյանի հետ հարցազրույցի: Մամուլի էջերում մնացել են իր բազմաթիվ հարցազրույցները:

2005 թվականին լույս տեսավ Հակոբ Հակոբյանի հոդվածների, էսսեների և հարցազրույցների ստվար ժողովածուն՝ «Ու մերթ լացավ, ու մերթ խնդաց իմ հոգիս» խորագրով:

Մեծավաստակ նկարիչը կյանքից հեռացավ 2013 թվականի մարտի 9-ին:

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Մատենագիտական այս ժողովածուն նվիրված է գեղանկարչի ծննդյան 100–ամյակին: Մշակութային աշխարհում լայն ճանաչում վայելող նկարիչն իր ստեղծագործություններով նորովի է բացահայտել Հայաստանի գեղեցկությունն ու հմայքը: Նա խոր հետք է թողել թե՛ հայկական և թե՛ խորհրդային արվեստում:

Սույն մատենագիտությունն ընդգրկում է նկարչի ստեղծագործություններին վերաբերող հայերեն և օտարալեզու գրականությունը՝ 1945 թվականից մինչև 2024 թվականը: Ուսումնասիրման համար հիմք են հանդիսացել Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուները, ինչպես նաև Հակոբ Հակոբյանի անձնական արխիվը, որը մեզ տրամադրելու համար խորին շնորհակալություն ենք հայտնում նկարչի ընտանիքին:

Աշխատանքն ունի հետևյալ կառուցվածքը.

Ա. Առաջաբան

Բ. Կյանքի և ցուցահանդեսային գործունեության համառոտ տարեգրություն

Գ. Հակոբ Հակոբյանի պատկերագրքերը, կատալոգները, փուլկետները, գրքերը

Դ. Հակոբ Հակոբյանի հողվածները

Ե. Հարցազրույցներ Հակոբ Հակոբյանի հետ

Զ. Գրքային և ամսագրային նկարազարդումներ

Է. Վերատպություններ պատկերագրքերում և կատալոգներում

Ը. Հակոբ Հակոբյանի մասին պարբերական մամուլում, պատկերագրքերում, կատալոգներում և հանրագիտարաններում Օժանդակ ցանկեր.

1. Անձնանունների ցանկ

2. Լուսանկարներում առկա անձանց անվանացանկ

3. Վերատպությունների ցանկ:

Մատենագիտության մեջ ընդգրկված նյութերը հիմնականում նկարագրված են ըստ սկզբնաղբյուրների: Միջնորդաբար նկարագրված նյութերը տրված են աստղանիշերով, դրանց սկզբնաղբյուրները մատչելի չեն եղել: Պարբերական մամուլում հրատարակված վերատպությունների անունները, թվականները և չափերը հիմնականում բացակայում են, դրանք ճշտվել են ալբոմներով և կատալոգներով: Թեպետև ձգտել եմ մատենագիտության ամբողջականությանը, այնուամենայնիվ, կարծում եմ կլինեն ցանկից դուրս մնացած նյութեր, որոնք հիմնականում հրատարակվել են արտերկրում:

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

1923 - Ծնվել է մայիսի 16-ին, արձանագրվել է՝ մայիսի 24-ին, Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Հայրը՝ լուսանկարիչ Տիգրան Հակոբյանը, մայրը՝ Զարուհի Եսայանը, Կիլիկիայի Այնթապ քաղաքից էին:

1930 - Յոթ տարեկան հասակում կորցրել է հորը:

1934 - Մեկնել է Կիպրոս, Նիկոսիա՝ սովորելու Մելգոնյան գիշերօթիկ կրթական հաստատությունում, որտեղ հանդիպել է նկարչության իր առաջին ուսուցիչներին՝ Առաքել Պատրիկին և հայտնի արվեստագետ Օնիկ Ավետիսյանին:

1941 - Պատերազմի պատճառով կիսատ թողնելով ուսումը՝ վերադարձել է Եգիպտոս:

1941–1943 - Աշխատել է Ալեքսանդրիայի տեքստիլ ֆաբրիկայում:

1943 - Տեղափոխվել է Կահիրե:

1944 - **1947** - Սովորել է Կահիրեի Գեղարվեստի ակադեմիայում, միաժամանակ աշխատել է որպես նկարիչ-ձևավորող:

1945 – Կահիրեում առաջին անգամ մասնակցել է Հայ մշակույթի բարեկամների ընկերության կազմակերպած «Եգիպտահայ նկարիչների ցուցահանդես»-ին:

1949 - Ամուսնացել է Մարի Հովելյանի հետ:

1952–1954 - Եզիպտոսի հայկական գաղութի հովանավորությամբ մեկնել է Փարիզ և սովորել նախ Անդրե Լոտտի, ապա Գրան-Շոմիեր ակադեմիայում՝ Էդուարդ Գոյերգի մոտ: Այդ տարիներին մասնակցել է ցուցահանդեսների:

1953 - «Էմիլ» ծածկանունով մասնակցել է «Բուխարեստի խաղաղության, երիտասարդության և ուսանողների չորրորդ միջազգային բիենալեին, արժանացել երկրորդ մրցանակի «Ֆելլաիի ընտանիքը» նկարի համար, որը նվիրել է սովետական պատվիրակությանը: Ստացել է հուշամեդալ:

1954 - Փարիզի Ժամանակակից արվեստի թանգարանում մասնակցել է Ֆրանսիացի երիտասարդ նկարիչների ցուցահանդեսին, ինչպես նաև «Անկախների սալոն» և «Աշնանային սալոն» ցուցահանդեսներին:

1955 - Ալեքսանդրիայի առաջին բիենալե: Ստացել է հուշամեդալ:

1956 - Մասնակցել է Կահիրեի սալոնի ցուցահանդեսին:

1958 - Կահիրե. Հայ մշակույթի բարեկամների ընկերություն. «Եզիպտահայ նկարիչների երկրորդ ցուցահանդես»:

1959 - Ալեքսանդրիայի երկրորդ բիենալե:

1959 - Մոսկվա, Լենինգրադ. «ԱՄՀ - Արաբական Միացյալ Հանրապետության արվեստը» ցուցահանդես:

1958-1961 - Կահիրեի և Ալեքսանդրիայի թանգարանները գնել են նկարչի գործերը:

1958-1961 - Լավագույն աշխատանքներից 10-ը նվիրել է Հայաստանի պետական պատկերասրահին:

1961 - Հայաստանի պետական պատկերասրահ. Միյուռքահայ նկարիչների ցուցահանդես:

1962 - Արաբական Միացյալ Հանրապետություն. «Եզիպտահայ արվեստագետների ցուցահանդես»:

Աշնանը ընտանիքով ներգաղթել է Հայաստան. հինգ տարի քնակվել է Լենինականում, աշխատել տեքստիլ գործարանում որպես նկարիչ-ձևավորող:

1963 - Երևան, Լենինական, Կիրովական. անհատական ցուցահանդեսներ: Դարձել է Հայաստանի նկարիչների միության անդամ, ընտրվել է Լենինականի քաղաքային խորհրդի դեպուտատ:

1967 - Տեղափոխվել է Երևան:

Մասնակցել է «Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին նվիրված հանրապետական ցուցահանդես»-ին, արժանացել առաջին մրցանակի:

«Ֆիզկուլտուրան և սպորտը կերպարվեստում» համամիութենական ցուցահանդեսին «Ֆուտբոլ» նկարի համար արժանացել է բրոնզե մեդալի:

Մոսկվա – ՍՍՀՄ ժողովուրդների չորրորդ Սպարտակիադայի ցուցահանդես՝ նվիրված «Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին»: Ստացել է Շնորհակալագիր:

Ընտրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ:

1969 - Փարիզ - «Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդես:

1970 - Մոնրեալ - «Էքսպո-70» համաշխարհային ցուցահանդես:

16 մարտի - «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես»: Պարգևատրվել է արծաթե մեդալով:

21 հուլիսի - Արժանացել է ՀՍՍՀ վաստակավոր նկարչի պատվավոր կոչման:

ՀՍՍՀ 50-ամյակի առիթով ստացել է բրոնզե հուշամեդալ՝ «1920-1970»:

1973 - Ընտրվել է Հայաստանի նկարիչների միության նախագահության անդամ:

1977, 30 դեկտեմբերի - Արժանացել է Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարչի պատվավոր կոչման,

Հայկական ՍՍՀ պետական մրցանակի դափնեկրի պատվավոր կոչման:

1983, 13 հունիսի - ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով պարգևատրվել է Պատվոգրով:

1986, ապրիլ, Թբիլիսի - Անդրկովկասի հանրապետությունների առաջին բիենալե (գեղանկար, քանդակ, գրաֆիկա): Ստացել է ոսկե մեդալ:

Արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի «Իմ երկիրը» նկարաշարի համար, որը նվիրում է Չեոնոբիլի ֆոնդին:

1988, 17 մարտի - Ընտրվել է ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ:

1989 - «Ընտանիք» մետաղյա հուշարձանը տեղադրվել է Արագածի գիտահետազոտական ինստիտուտի տարածքում:

1993 - Տասը աշխատանք է նվիրել «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Արժանացել է հիմնադրամի մրցանակին:

1994, Փարիզ - Հայ նկարիչների ցուցահանդես-վաճառք: Հասույթով «Արվեստների կենտրոն» շենքում ձեռք է բերվել «Հայաստան» արվեստանոցը:

1996 - Դարձել է Ռուսաստանի Դաշնության Գեղարվեստի ակադեմիայի անդամ:

20 սեպտեմբերի – Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման հինգերորդ տարեդարձի առիթով ազգային մշակույթի զարգացման գործում նշանակալի ավանդի համար ՀՀ նախագահի հրամանագրով արժանացել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» պետական շքանշանի:

1999, Հալեա - Կրթասիրաց միութեան 75-ամյակի (1924 - 1999) առիթով ստացել է արծաթե հուշամեդալ:

2001 - Շնորհիվ էլ Երևանի պատվավոր քաղաքացու կոչում:

2003, 4 հունիսի - Արժանացել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» շքանշանի:

2010 - Էջմիածին քաղաքի մուտքի ձևավորում: Հուշարձան «Սուրբ աջ»՝ նվիրված Հայ Առաքելական եկեղեցուն:

7 սեպտեմբերի – Պարգևատրվել է ՀՀ Սփյուռքի նախարարության «Արշիլ Գորկի» մեդալով:

2012, 5-20 սեպտեմբերի - Նարեկացի Արվեստի Միություն. «Նարեկյան պատկերակերտումներ» ցուցահանդես:

2013, մարտի 9-ին կնքել է մահկանացուն:

2013 «Միրո պարտեզ» շարքի համար հետմահու արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆՐԵՄՆԵՐ

1963, 3 մարտի, Երևան - Առաջին անհատական ցուցահանդեսը նկարչի տանը,

19 մայիսի - Լենինական,

Հուլիս - Կիրովական:

1970 - Տարտու:

1971 - Երևան:

1977-1985 - Փարիզ, Ռիգա, Վիլնյուս, Մոսկվա, Լենինգրադ, Նովոսիբիրսկ, Ռոստով, Ստավրոպոլ, Վոլգոգրադ, Թբիլիսի, Կիև, Օդեսա, Լվով, Ալմա-Աթա և ԽՍՀՄ այլ քաղաքներ:

1977 - Տալլին, Տարտու, Ռիգա, Լվով, Թբիլիսի:

1978, 11 հունվարի - Կիև,

3 հոկտեմբերի, Թբիլիսի - Ազգային պատկերասրահ:

1979, ապրիլ - Մոսկվա,

16 սեպտեմբերի - 30 սեպտեմբերի, Փարիզ - «Արվեստի միջազգային կենտրոն»:

1980, սեպտեմբեր, Երևան - Նկարիչների միություն, Լենինական, Նովոսիբիրսկ:

1981, Երևան - Պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետ. «Նեյտրոնային ռումբին՝ ո՛չ» նկարի ցուցադրություն,

11-18 մայիսի, Նիկոսիա:

1983, 15 մարտի, Օդեսա - Արևմտյան և Արևելյան արվեստի Օդեսայի թանգարան,

14 մայիսի, Դոնի Ռոստով - գեղարվեստի շրջանային թանգարան,

Վիլնյուս,

Ստավրոպոլ:

1984, Դետրոյթ – ԱՄՆ-ի Սբ. Հովհաննես եկեղեցու գեղարվեստի կոմիտեի կազմակերպած սլայդների ցուցադրություն:

1984 – 1985, 29 նոյեմբերի - 9 փետրվարի, Փարիզ,

Վոլգոգրադ,

Ալմա-Աթա:

1987, փետրվար, Հելսինկի– Հայ մշակույթի օրեր:

1990, սեպտեմբեր, Մոսկվա – ցուցահանդես ՍՍՀՄ նկարիչների միության նկարչի կենտրոնական տուն:

1992, նոյեմբեր, Երևան – Հայաստանի ազգային պատկերասրահ:

1994, 22-23 նոյեմբերի, Բեյրութ - Ռոշան պատկերասրահ. յուղանկարների ցուցահանդես:

1996, 21 մարտի, Բեյրութ - Ռոշան պատկերասրահ. ջրաներկ աշխատանքների ցուցահանդես,

1998, 30 հուլիսի, Լոս Անջելես, Փասադենա – ՀԲԸՄ Ալեք Մանուկյան կենտրոնի Պոյաճյան սրահ, կազմակերպիչ Թեքեյան Մշակութային Միություն:

1998 Կահիրե:

1999 5 հոկտեմբերի, Էջմիածին – Մ. Աբեղյանի թանգարան:

2001, 7 սեպտեմբերի, Երևան – «Ակադեմիա» պատկերասրահ. ջրաներկ աշխատանքների ցուցահանդես:

2003, 16 - 30 մայիսի, Երևան – Հայաստանի նկարիչների միություն, Նկարչի տուն. ցուցահանդես նվիրված նկարչի ծննդյան 80–ամյակին:

2004, 5 - 7 նոյեմբերի, Տորոնտո, ՀԲԸՄ(AGBU):

2005, 21 հունվարի – 6 փետրվարի, Լոս Անջելես, Գլենդել - «Հարվեստ» պատկերասրահ,

29 ապրիլի - 1 մայիսի, Մոնրեալ, Կանադա - նկարչական ցուցահանդես եկեղեցու «Մարի Մանուկյան» սրահում:

2006, 30 ապրիլի - 2 հուլիսի, Լոս Անջելես – Արհեստների և ժողովրդական արվեստի թանգարան, «Հայրենիք. Հայաստանի տեսիլներ» ցուցահանդես:

2007, 9 հունվարի -15 փետրվարի, Մարսել - «Ֆրանսիայում Հայաստանի տարին» ցուցահանդես,

Մինսկ - Հայաստանի մշակույթի օրեր Բելառուսում,
Տորոնտո, Լեոնարդո ցուցասրահ:

2009, 8 - 15 ապրիլի, Երևան - Հայաստանի նկարիչների միություն, Նկարչի տուն. ցուցահանդես նվիրված նկարչի ծննդյան 85–ամյակին,

2011, 13 մայիսի, Երևան - Գաֆեսճեան արվեստի կենտրոն. «Հողեղեն գույների երգը» ցուցահանդես,

2013, մարտ, Երևան - Գաֆեսճեան արվեստի կենտրոն: Հետմահու. «Երկաթե երկեր» քանդակների ցուցադրություն,

2014, Երևան - Հայաստանի ազգային պատկերասրահ. «Ներհայեցում» ցուցահանդես նվիրված նկարչի ծննդյան 90-ամյակին:

2017, Լոս Անջելես - Թուֆենկյան Ֆայն արտս (Գեղեցիկ արվեստների) պատկերասրահ,

2023, Երևան - Հայաստանի ազգային պատկերասրահ. «Հոգու հայելի - 100» ցուցահանդես:

2024, 21 մայիսի, Երևան - Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն. համերգ նվիրված նկարչի ծննդյան 100-ամյակին և Երևանի Ժամանակակից արվեստի թանգարան՝ հավաքածուի ցուցադրություն:

ԽՄԲԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՄՆԵՐ

1945, Կահիրե - Հայ մշակույթի բարեկամների ընկերություն.
«Եգիպտահայ նկարիչների ցուցահանդես»:

1953, Բուխարեստ - Երիտասարդների և ուսանողների խաղաղության չորրորդ միջազգային բիենալե: Արժանանում է երկրորդ մրցանակի «Ֆելլախի ընտանիքը» նկարի համար: Նկարը նվիրում է Սովետական պատվիրակությանը:

1954, Փարիզ - Փարիզի ժամանակակից արվեստի թանգարան. «Ֆրանսիացի երիտասարդ նկարիչների V սալոն»: Մասնակցում է նաև «Անկախների սալոն» և «Աշնանային սալոն» ցուցահանդեսներին:

1955 - Ալեքսանդրիայի առաջին բիենալե:

1956 Կահիրե - «Salon du Caire» ցուցահանդես:

1958 Հայ մշակույթի բարեկամների ընկերության կազմակերպած «Եգիպտահայ նկարիչների երկրորդ ցուցահանդես»:

1959 - Ալեքսանդրիայի երկրորդ բիենալե,

Մոսկվա, Լենինգրադ - «Արաբական Միացյալ Հանրապետության արվեստը» ցուցահանդես:

1961, Երևան - Հայաստանի պետական պատկերասրահ. Միջուղահայ նկարիչների ցուցահանդես:

1962, Կահիրե - «Եգիպտահայ արվեստագետների ցուցահանդես»,

1964, Լենինական - Ս. Դ. Մերկուրովի անվան նկարչական դպրոց. խմբային ցուցահանդես:

1967, Երևան – Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 50–ամյակին նվիրված հանրապետական գեղարվեստական ցուցահանդես: Արժանանում է առաջին մրցանակի,

Մոսկվա - «Սովետական իշխանության 50 տարին» համամիութենական գեղարվեստական ցուցահանդես,

1967, Մոսկվա - «Մարմնամարզություն և սպորտ» համամիութենական գեղարվեստական ցուցահանդես: Պարգևատրվում է բրոնզե մեդալով:

1968, Հայաստանի արվեստագետների ստեղծագործությունների հանրապետական հորելյանական ցուցահանդես 1917-1967:

1969, Մոսկվա, Ալմա–Աթա, Վոլգոգրադ, Տալլին - վեց հայ նկարիչների շրջիկ ցուցահանդես,

1969, Մոսկվա - Կոմերիտիության 50-ամյակին նվիրված «Հայրենիքի պաշտպանության դիրքերում» համամիութենական գեղարվեստական ցուցահանդես:

1969, Փարիզ – «Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդես:

1969, Երևան – Հայաստանի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես

1970, Մոնրեալ – «Էքսպո–70» համաշխարհային ցուցահանդես,

Տարտու – 6 նկարչի խմբային ցուցահանդես,

Մոսկվա – «Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակ» համամիութենական գեղարվեստական ցուցահանդես,

Մոսկվա – «Ֆիզկուլտուրա և սպորտ» համամիութենական գեղարվեստական ցուցահանդես:

1971, Փարիզ, Պրահա – «Սկյութներից մինչև մեր օրերը» ռուսական և սովետական արվեստի ցուցահանդես:

1971-1972, Մոսկվա, Չեխոսլովակիա, ԳԴՀ – ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին նվիրված Անդրկովկասյան հանրապետությունների կերպարվեստի ցուցահանդես,

Երևան – ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին նվիրված «ՍՍՀՄ-ը մեր հայրենիքն է» հայ նկարիչների ստեղծագործությունների հոբելյանական ցուցահանդես,

Մոսկվա – ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին նվիրված «ՍՍՀՄ-ը մեր հայրենիքն է» համամիութենական գեղարվեստական ցուցահանդես:

1973, Փարիզ – Սովետական նկարիչների ցուցահանդես:

1974, Բեյրութ – «Հայկական գույները» սովետահայ նկարիչների խմբային ցուցահանդես,

24 հուլիսի, 14 օգոստոսի, Վիեննա - Մինաս Ավետիսյանի հետ համատեղ գեղանկարների ցուցահանդես:

1975, Բոլոնիա, Բարի – «Սարյանը և 13 հայ ժամանակակից նկարիչների» ցուցահանդես,

Երևան – «Մեծ հաղթանակի 30 տարին». Հայաստանի նկարիչների հանրապետական ցուցահանդես,

Մոսկվա - «Մեծ հաղթանակի 30 տարին». համամիութենական գեղարվեստական ցուցահանդես,

Երևան – «Փառք աշխատանքին». հանրապետական գեղարվեստական ցուցահանդես:

1976, Մոնրեալ, Կանադա – «Սպորտը և մշակույթը մարդկության ծառայության համար» ցուցահանդես,

Մոսկվա – «Փառք աշխատանքին» Համամիութենական գեղարվեստական ցուցահանդես:

1976, Մարսել, Փարիզ – «Սովետահայ նկարիչներ ցուցահանդես»,

1976, Բուենոս Այրես – «ԽՍՀՄ արդյունաբերական ցուցահանդես»,

Երևան, Թբիլիսի – Կոմկուսի XXV – համագումարին նվիրված Անդրկովկասյան նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես,

Երևան – «Մեկ աշխատանքի Հանրապետական ցուցահանդես»:

1977, Մարսել և Փարիզ - «Հայկական գույներ» սովետահայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես,

Քյոլն, Կոպենհագեն - հայկական արվեստի ցուցահանդեսներ,

Քյոլն – Հայկական Սովետական գեղանկարչության ցուցահանդես,

Կիև, Օդեսա, Բելգորոդ, Տալլին, Դնեպրոպետրովսկ, Զապորոժիե - «Փառք աշխատանքին» գեղանկարի շրջիկ ցուցահանդես:

Մոսկվա – Գծանկարի առաջին համամիութենական ցուցահանդես,

Երևան – Գրաֆիկայի հանրապետական ցուցահանդես

1978, Լիսաբոն - Սովետահայ նկարիչների խմբային ցուցահանդես,

19 - 26 սեպտեմբերի, Փարիզ – «Հայկական գույներ» ցուցահանդես (Սովետական Հայաստանի 12 ժամանակակից նկարիչներ),

Նյու-Յորք – «Հայկական գույներ» ցուցահանդես (Սովետական Հայաստանի 12 ժամանակակից նկարիչներ),

Երևան - Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միա-
նալու 150-ամյակին նվիրված հանրապետական ցուցահանդես,

Կիրովական - Հայաստանի պետական պատկե-
րասրահի Կիրովականի մասնաճյուղի ֆոնդերից ստեղծագործու-
թյունների ցուցահանդես,

1978, Փարիզ և Նյու-Յորք - «Հայկական գույներ» ցուցահան-
դես (Սովետական Հայաստանի 12 ժամանակակից նկարիչներ),

Երևան - Հանրապետական ցուցահանդես նվիրված
Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-
ամյակին,

Կոստանցա, Բրատիսլավա, Սոֆիա - «Լենինյան ճա-
նապարհով» համամիութենական ցուցահանդես,

Բելգրադ - «Հայրենիքի կերպարը» սովետական բնա-
նկարի ցուցահանդես:

Կյոկ-ժանգակ, Կարա-Կուլ, Անդիժան, Սովետաբադ,
Ջալալ-Աբադ, Կիզիլ-Կիյա - սովետական նկարիչների շրջիկ ցու-
ցահանդես:

1979, Մոսկվա - «Բնությունը և մենք» ցուցահանդես:

1980, Երևան - Հոբելյանական ցուցահանդես

Թբիլիսի - ՍՍՀՄ նկարիչների միության IV պլենումին
նվիրված սովետական կերպարվեստի շրջիկ ցուցահանդես,

25 սեպտեմբերի, Թբիլիսի - Վրաստանի պետական
պատկերասրահ. «Խորհրդային հանրապետությունների արվես-
տի բաժնի նոր ձեռքբերումներ» ցուցահանդես,

Մոսկվա - Վ. Ի. Լենինի ծննդյան 110-ամյակին նվիր-
ված համամիութենական նկարչական ցուցահանդես:

Մոսկվա - XXII օլիմպիադայի խաղերին նվիրված
«Սպորտը - խաղաղության դեսպան» համամիութենական նկար-
չական ցուցահանդես:

1982, Նյու Ջերսի – A.G.B.U. Art Expo:

1981-1982, 25 նոյեմբերի - 12 փետրվարի, Փարիզ – «Ռուսական նկարչությունն այսօր» ցուցահանդես:

1982, Փարիզ - Գառզուի և Ժանսեմի հետ «Գորկի» ցուցադրահում:

1982-1983, 28 դեկտեմբերի - 29 հունվարի, Փարիզ – «ՍՍՀՄ ժամանակակից նկարիչներ» ցուցահանդես:

1984, Կասսել - Հայաստանի օրերի շրջանակում՝ գեղանկարների և ջրաներկ աշխատանքների ցուցահանդես (Ալեքսանդր Գրիգորյանի հետ համատեղ):

1985, Մոսկվա – «Սովետական Հայաստանի գեղարվեստը» ցուցահանդես. Գեղանկար, քանդակ, գրաֆիկա,

Լոնդոն - «Ժամանակակից արվեստ» միջազգային ցուցահանդես (Վլադիմիր Վեյսբերգի հետ համատեղ):

1985-1986, 26.12.85 – 02.02.1986, Ֆինլանդիա, Դիպուլի – «Բնանկարի արվեստը» ցուցահանդես:

1986, Թբիլիսի – Առաջին անդրկովկասյան բիենալե: Արժանանում է ոսկե մեդալի:

1987-1990, Երևան, Մոսկվա, Լենինգրադ, Վոլգոգրադ, Սարատով, Ուլյանովսկ, Կիև, Օդեսա, Վիլնյուս, Ռիգա, Գորկի, Ռյազան, Իվանովո, Սոչի, Ռոստով, Դոնեցկ, Նովոսիբիրսկ, Վլադիվոստոկ, Կրասնոյարսկ - «Սարյանը և իր ժամանակակիցները. 13 հայ նկարիչներ» զծանկարի և ջրաներկ աշխատանքների ցուցահանդես,

Իսպանիա - «Հայաստանի ժամանակակից նկարչությունը» ցուցահանդես,

1987-1988, Պադուա, Վենետիկ - «Սարյանը և իր ժամանակակիցները» և «Իտալիան հայ նկարիչների աչքերով» ցուցահանդեսներ:

1988, Քյոլն – «Խորհրդային արվեստն այսօր» ցուցահանդես,
Մոսկվա, Լենինգրադ – Կ. Պասմաճյանի հավաքածուից XVI–XX դարերի գեղարվեստական ստեղծագործությունների ցուցահանդես:

1987-1988, Համբուրգ, Սյունիսեն, Մոսկվա, Լենինգրադ:

«Պատերազմը և խաղաղությունը նկարիչների աչքերով. վախ և հույս» ցուցահանդես:

1989, Մոնրեալ - Հայ նկարիչների ցուցահանդես-վաճառք՝
Հայաստանում երկրաշարժից տուժածներին օգնելու նպատակով,
Տոմսկ - Սովետահայ նկարիչների ցուցահանդես,

1990, 6 դեկտեմբեր, Գլենդել, Լոս-Անջելես – Ցուցահանդես:

1991, Մոսկվա - «ՄՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի անդամների ստեղծագործությունների XVII ցուցահանդես»,

1994, Փարիզ – Հայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես-վաճառք: Հասույթով «Արվեստների կենտրոն» շենքում հիմնվել է «Հայաստան» արվեստանոցը:

1995, Նյու Ջերսի - «Գուլագից Կրասնոդար. Սովետական Միության ոչ հարմարվողական արվեստը» ցուցահանդես, Զիմմերլի թանգարան:

1995 Գերմանիա, Բոխում - «Հայկական մշակույթը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» ցուցահանդես:

1995-1996, Ֆրանսիա - Մինաս Ավետիսյան, Հակոբ Հակոբյան, Արտո Չաքմաքչյան՝ համատեղ ցուցահանդես:

1996, Երևան - Ազգային պատկերասրահ. «Հայրենադարձ նկարիչների ցուցահանդես»,

Մայիս, Մարսել – «Ծովի երգը» ցուցահանդես:

1997, Թեսսալոնիկե – Հունաստանում եռամսյա փառատոնի շրջանակում՝ «ΔΗΜΗΤΡΙΑ'97» ցուցահանդես,

22 հոկտեմբերի, 15 նոյեմբերի - 19-րդ դարից մինչև 1980 թվականների 32 նկարչի գործերի «Հայաստանի գույները» ցուցահանդես:

1998, 4 հոկտեմբերի, Երևան – Նկարիչների միության ցուցասրահ. «Մուտք XXI դար» ցուցահանդես (13 նկարչի գործ Ժամանակակից արվեստի թանգարանից),

11-16 հունվարի, Կահիրե – Հայ մշակույթի և արվեստի փառատոն Եգիպտոսում:

2003, Երևան – «Ակադեմիա» պատկերասրահ. ջրանկարներ և յուղանկարներ,

2005, Московский международный художественный салон ЦДХ-2005 «Среда обитания» ԱՊՀ և Բալթյան երկրների առաջին ցուցահանդես,

Ռիո-դե-ժանեյրո – խմբային ցուցահանդես,

Երևան – Հայաստանի նկարիչների միության ցուցասրահ. Հայոց Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված ցուցահանդես:

2009 Երևան – «Ակադեմիա» պատկերասրահ. «Հայկական նատյուրմորտ» ցուցահանդես:

2010 Երևան – Հայաստանի ազգային պատկերասրահ. Հայոց Մեծ եղեռնի 95-րդ տարելիցին նվիրված ցուցահանդես:

Երևան – Հայաստանի նկարիչների միություն. «Մարմին. նոր պատկերային արվեստը Հայաստանում» ցուցահանդես,

Երևան – Հայաստանի ազգային պատկերասրահ. Տիգրան Մեծ 2150-ամյակ: Մեկ աշխատանքի ցուցահանդես,

8 դեկտեմբերի, Երևան – ՀՀ նկարիչների միության ցուցասրահ. «Շորժա. Հետադարձ հայացք դեպի ապագա» ցուցահանդես:

2011, Երևան – Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված «Անկախության ներկայանակ» ցուցահանդես,

Երևան – Ֆ. Նանսենի 150-ամյակին նվիրված «Ֆրիտյոֆ Նանսեն 1861–1930» ցուցահանդես,

Երևան – ՀՀ Սահմանադրական դատարանի 15-ամյակին նվիրված «Սահմանադրություն և արվեստ» ցուցահանդես:

9 դեկտեմբեր, Լոնդոն - «Ժամանակակից հայ նկարչության բարեսիրական աճուրդ»:

2012, Երևան – «Ակադեմիա» պատկերասրահ. Սբ. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին նվիրված ցուցահանդես:

2012, Սեպտեմբերի 5-20 – «Նարեկացի արվեստի կենտրոն», «Նարեկյան պատկերակերտումներ» ցուցահանդես:

2013 Լոնդոն – 4 - 12 մարտ, Սոթբի

2014 Լոնդոն – 27 մարտ - 1 ապրիլ, Սոթբի

Երևան – Հայաստանի նկարիչների միություն. «Քայլ. Ձևափոխության և Ձևաստեղծման միջև» ցուցահանդես:

2015 Երևան – Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Պատասխան 100 տարի անց» ցուցահանդես

Հունիսի 17, Թբիլիսի – «Կոմիտասը XX դարի հայ նկարիչների աչքերով» ցուցահանդես:

2019 Երևան – Հայաստանի ազգային պատկերասրահ. «Արևելքը և Հայ արվեստը» ցուցահանդես:

ՊԱՏԿԵՐԱԳՐՔԵՐ, ԿԱՏԱԼՈԳՆԵՐ, ԲՈՒՎԼԵՏՆԵՐ, ԳՐՔԵՐ

1963

1. **ՀԱՎՈՐ ՀԱՎՈՐՅԱՆ = АКОП АКОПЯН.** Յուգահանդեսի կատալոգ = Каталог выставки / Առաջարանը՝ Գ. Խոստիկյանի.- Երևան, 1963.- 29 էջ: դիմանկ., 9 թ. նկ., Հայաստանի կերպարվեստագետների միություն, Հայաստանի նկարչի տուն: Հայերեն և ռուսերեն: Կատալոգ, 1958-1963: Վերատպություններ՝ «Նատյուրմորտ», «Ծխողը», «Եգիպտացի բանվորների ճաշը», «Մարդը և բույսը», «Մարոն», «Լենինական, Կիրովի փողոցը», «Սպասավորը», «Նատյուրմորտ զամբյուղով»:

1974

2. **ՀԱՎՈՐ ՀԱՎՈՐՅԱՆ = АКОП АКОПЯН.** (Հայաստանի պետական պատկերասրահ).- [Համառոտ կենսագրական ակնարկ և վերատպություններ] / Կազմ.՝ Զ. Օհանյան; Խմբ.՝ Վ. Հարությունյան.- Երևան, 1974.- 9 էջ տեքստ: Տեքստը՝ զուգահեռ հայերեն և ռուսերեն; Վերատպություններ՝ «Վիշտ», «Մխտորներ աթոռի վրա և զամբյուղի կողքին», «Խոհանոցի մի անկյուն»:

3. **АКОП АКОПЯН.** [Комплект открыток] / Авт. текста Г. Игитян: Ред. Е. П. Суздалева; Худ. ред. К. О. Остольский.– Москва : Советский художник, 1974.– 13 откр., 1 л. текста (слож. вдвое) в обл.

1975

4. **HAGOP HAGOPIAN = АКОП АКОПЯН.** Edition d'Art Aurore. [Комплект из 13 открыток. Репродукции произведений] / Составитель и текст Ш. Хачатрян = Ch. Khatchatrian. Оформление художника В. Левченко; перевод Д. Лукьяненко; ред. А. Богачева; ред. фр. текста В. Максимов.– Ленинград: Аврора, 1975.– Комплект из 13 цвет. открыток, [4] с. текст. 21x15 см.; на обложке: «Ворота. Ленинанкан», 1963; «Натюрморт», 1973. (На русском и французском яз.).

Окно = «La fenêtre», 1957; «Домохозяйка» = «La ménagère», 1959; «Портной» = «Le tailleur», 1959; «Уголок кухни» = «Coin de la cuisine», 1960; «Весна» = «Printemps», 1970; «Покой» = «Sérénité», 1970; «Овраг» = «Ravin», 1971; «У канала» = «Au bord d'un canal», 1971; «Улица в Ленинанкане» = «Rue à Léninakan», 1972; «Натюрморт» = «Nature morte», 1972; «Пейзаж. Мармашен» = «Paysage», 1972; «Вохчаберд» = «Vokhtchaberd», 1972; «Портрет кинорежиссера Артура Пелешяна» = «Portrait du metteur en scène Arthur Péléchian», 1974.

Շապիկի վրա՝ «Դարձաւ» 1963, կտավ, յուղաներկ 73x41, «A. Wicket» 1963.

1977

5. **АКОП АКОПЯН = HAGOP HAGOPIAN.** [Репродукции произведений] / Сост. Ш. Хачатрян: Հայկական ՍՍՀ վաստակավոր

նկարիչ Հակոբ Հակոբյանի նկարների ցուցահանդեսը: Ցուցակ / Առաջաբանը՝ Հ. Իզիրյանի: Ձևավորումը՝ Ա. Կեերենդի: Ավրորա.- Տալին, 1977.- 12 էջ; նկ.- էստոներեն:

1979

6. **АКОП АКОПЯН:** Народный художник Армянской ССР. Каталог выставки / Сост. кат. Л. Л. Мирзоян, Ш. Г. Хачатрян; предисловие: Ш. Г. Хачатрян.- Союз художников СССР, Министерство культуры Армянской ССР, Союз художников Армянской ССР.- Москва: Советский художник, 1979. - [46] с. : цв. ил., ил. ; 29 см. На обложке «Покой» 1971. Фрагмент.

На обложке: «Покой», 1971, фрагмент; Биографическая справка. Живопись. Акварели и рисунки. Репродукции: «Склон горы», 1972, «Женщина на кухне», 1959, «Горе», 1961, «Уголок кухни», 1960, «Балкон», 1958, «Портной», 1959, «Натюрморт с чесноком», 1961, «Натюрморт. Инструменты», 1976, «Натюрморт», 1973, «Утро в Агавнадзоре», 1966, «Армянский мотив», 1968, «Деревья», 1970, «Натюрморт. Манекен и цветы», 1972, «Натюрморт. Цветы», 1975, «Полдень в Агавнадзоре», 1966, «Портрет кинорежиссера А. Пелешяна», 1974, «Портрет врача А. Келешяна», 1976, «Арабат», 1974, «Улица. Ленинанкан», 1972, «Покой» 1971, «У канала», 1971, «Лаваш» (Хлеб), 1975, «Нет – нейтронной бомбе!», 1977.

7. **HAGOP HAGOPIAN. Peinture, graphique** / Ministère de la culture de l'U.R.S.S. ; Sous les auspices de l'ambassade de l'U.R.S.S. en France / préface Chahen Khatchatourian. - Paris : Centre d'art international, 1979. - [10] p., ill. - Notes Biographiques. Liste des œuvres. Reproductions: «Une femme au miroir», 1969; «Le village

Malichka», 1970; «Les premiers jours du printemps», 1971; «Nature morte. Les instruments», 1976.

1980

